

ՄՏՈՒԳՎԱԾ 1 1981 թ.

1201 570

## ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ԱԼԼԱԶՎԵՐԴՈՒ ՇՐՋԱՆԱ-  
ՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ  
ՆԱԽԱԳԱԶՈՒԹՅԱՆ

1936 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏՈՒՄ



Գրավիտի լիազոր Ա--319. Կիրովականի ապարան

---

Պատվեր № 208

631.15 (47:825)

7

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ


**ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ԱՆԱԿՎԵՐԴՈՒ ԶՐԶԱ-  
ՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ  
1936 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏՈՒՄ**

A  
3612

**1936 Թ. ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ-  
ՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ**

## 1. ՍԵՐՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Բերքատվության բարձրացման լավագույն միջոցառումներից մեկն էլ լավորակ, առողջ և մաքուր սերմացու գործադրելն է: Մերձը դուռն ու տեսակավորելը պետք է կատարվի լացրապես տրյերներով, վորի կատարումը 100%-ով պարտադիր է կոլ-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԱԿԱՆ  
ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վաստակաւ թշուառների և սկնտանտանների համար:

2. Պարտադիր և սերմֆոնդի լարորատոր ստուգումը յերկու նվազ՝ 1. սերմֆոնդի առանձնացման ժամանակ, իսկ յերկրորդը ցանքից 20 որ առաջ: Արգելվում և ցանքը կատարել առանց սերմ ստուգող լարորատորի աջի սերմացույի վորակը հաստատող փաստաթղթի:

3. Ախտահանման յենթակա յեն ցորեն, դարբի և հաճար: Չոր ախտահանումը կատարվելու չե բացառապես մեքենաներով:

4. Գարնանացանի սերմի զաման աշխատանքները ավարտվում են մինչև դեկտեմբերի տասը՝ իսկ ախտահանումը տարվում և զուգընթաց ցանքի հետ:

Աշնանացանի սերմերի զտումը կատարել կարելու ժամանակ:

## 2. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Վարի խորությունը, վորպես բերքատվության բարձրացման հիմնական միջոցառումներից մեկը, սահմանել հացահատիկային կուլտուրաների համար 18—20 սմ. խորությամբ, իսկ արմատապտուղների և պարարապտուղների համար 20—22 սմ. խորությամբ:

Յ Ա Ն Ք Ի Ժ Ա Մ Կ Ե Տ Ն Ե Ր

Գյուղերի անունը	Հացահատիկ. կուլտուրա.		Խոտաբույսեր		Կարտոֆիլ		Մետախոտ, Կտալահատ	
	Սկզբ	Ճգրի	Սկզբ	Ճգրի	Սկզբ	Ճգրի	Սկզբ	Ճգրի
Աթան, Ահնիզուր, Շամուա, Լորուա, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Մաբաց, Բարինջ, Դսեղ, Ս. Բագրի, Զիլիզա:	2/4	12/4	1/4	2/4	1/4	20/4	20/4	1/5
Ղաշաղան, Կ. Ազեզի, Մղարթ, Մաթեր, Այգեհատ, Արդվի, Ուզունլար, Ափոջ, Ս. քորի, Սանահին, Ակներ, Ալլահգերգի, Հագվի, Հախպատ, Նեղուց, Սանահին	27/3	7/4	25/3	27/3	25/3	15/4	15/4	30/4
Ճոճկան, Աբճիս, Լճիաձոր, Կողբ, Բարանա, Դովեղ, Ղալաշա, Բորբլու, Շնող	22/3	30/3	20/3	22/3	25/3	5/4	1/5	10/6
Սանահին, Հալբատ, Շնող լեռնային մասերում	12/3	20/3	10/3	15/3	15/3	20/3	1/5	10/6
	25/3	5/4						

## ՏԱԼՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՅԵՆՏՆԵՐՈՎ

	Ճուրեմ		Գարրի		Ղիկու		Կարնդան		Հա- ճար	Կամսօքիլ	Յեզիպազ սիլոսի	Արեթած սիլոսի
	Շարք.	Շաղ	Շարք.	Շաղ	Շարք.	Շաղ	Շարք.	Շաղ	Շաղ			
Գոսեղի յենթաշրջ.	1,4	1,6	1,5	1,7	1,00	1,20	1,00	1,20	1,6	22	0,6	0,25
Ուղանդարի յենթ.	1,4	1,6	1,6	1,8	1,00	1,2	1,00	1,2	1,6	23	0,6	0,25
Մանեւի յենթաշրջ.	1,4	1,6	1,5	1,7	1,00	1,2	1,00	1,2	1,6	22	0,6	0,25
Շնուղ, Բարանա յեն- թաշրջաններ	1,3	1,5	1,4	1,6	1,1	1,2	1,00	1,2	1,5	22	0,6	0,25

Արգելվում է ցանքատերերին շարքացա-  
նի պլանը փոխարինել շաղպացանով:

2. Ցանքը կատարել նախապես հերկված  
հողում, ցանքի ծածկումը պետք է կատար-  
վի դիպ-զապ փոցխերով:

3. Հողի կազմութունը (ստրուկտուրան)  
ապահովելու համար հերկը պետք է կատար-  
ել հողի հասունացած ժամանակ (քեշի յե-  
կամ):

## 5. ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄ

Հողրամնի կողմից իջեցված պարար-  
տացման պլանը պարտադիր կերպով պետք  
է ցանքատերերի կողմից կատարվի ան-  
փոփոխ:

2. Այն ցանքատերերը, վերոնք իրենց  
ունեցած դամադրը չեն սպասադործում, գյուղ-  
խորհուրդին իրավունք է վերապահվում  
աջդպիսին տրամադրել այն ցանքատերերին,  
վերոնք պարարտանյութի կարիք են զգում:

6. ՅԵՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ

	Սկիզբ	Վերջ
Վաղ ցեղ	20/III	2/V
Ամռան ցեղ	1/VI	20/VII
Ցրտահերկ	5/III	11/X

7. ՇԱՐՔԱՀԵՐԿ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՑԱՆՔԸ  
ՅԵՎ. ՄՇԱԿՈՒՄԸ

1. Կարտոֆիլին, արմատապտուղներին և ծխախոտին հատկացնում են անհամեմատ վորակավոր, պարարտացված հողամասերը, վերոնց նախապատրաստումը ցանքի համար պետք է կատարվի աշնանից, այդ տարածուխյունների համար կատարելով ցրտահերկ:

2. Յուրաքանչյուր հեկտարին կարտոֆիլի ցանք կատարել հետևյալ ձևով՝ շարքը-շարքից 60—80 սմ. հեռու, ըուչաք-ըուչախց 40—50 սմ. հեռավորության: Արդելվում է պալարի անկումը հատած ձևով:



3. Կարտոֆիլի և արմատապտուղի քաղհանը պետք է կատարվի չերկու անգամ:

4. Կարտոֆիլի բուկ տալը առնվազն պետք է կատարվի չերկու անգամ մինչև կարտոֆիլի ծաղկելը:

Կարտոֆիլի 1-ին բուկ տալ, չերք կարտոֆիլի թուփն ունի 18—20 սմ. բարձրությամբ, առաջին բուկկիցից 8—12 որից հետո կատարել չերկրորդ բուկկիցը:

#### 8. ՅԱՆՔԻ ԽՆՍՄՔԸ

1. Գարնանացանը կատարելուց 20 որից հետո սկսել ցանքերի քաղհանման աշխատանքները, առաջին հերթին աշնանացաններ. քաղհանը կատարվելու յե չերկու անգամ-աչս աշխատանքները ավարտվելու չեն մինչև ձ հացահատիկի խողովակի գցելը: (Վերջացնել մինչ բույսերի ցողուն կաղձելը):

2. Հնձել ճանապարհների, միջնակների, առուների մոտ գտնված բոլոր մուրախտերը, մինչև ձ նրա ծաղկելը: Քաղհանած և հնձած մուրախտը հավաքել և հեռացնել ցանքից:

3. Վազ գարնանը սկսել վաբելահողերի

քարերի հավաքը աչն հաշվով, վոր մինչևի  
ցանքի աշխատանքները ավարտված լինեն:  
Հավաքած քարերը վոչ մի դեպքում չթող-  
նել դաշտերի կամ միջնակների մեջ, այլ  
հավաքել ճանապարհների մոտ, հետադառնում  
հեռացնելով նաև ճանապարհից:

9. ՊԱՅԲԱՐ ՅԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ

1. Ստախվ արգելվում և ցանքադաշտերում  
անասունների մուտքը մինչև բերքահավաքի  
ավարտումը: Յանքի պաշտպանության հա-  
մար, ցանքատերերի հաշվին նշանակվում  
են հանդապահներ՝ հատուկ վարձատրու-  
թյամբ՝ վորոնց ոճանդակության ու հակո-  
ղության գործը գրվում և միլ. վարչության  
ու գյուղխորհուրդների վրա:

2. Գարնանացանի սկզբից բոլոր կոլխոզ-  
ներում նշանակվում են հակիչներ բերքը  
հափշտակումներից և հրդեհից ապահովելու  
նպատակով. կաշերում գեղերի մոտ  
մշտական պետք և պահվի տակառներով

ջուր և վորոշ չափով հող ու ավազ, ինչպես  
հասե պետք և լինեն պահակներ:

3. Կալերը պետք և լինեն կենարոնաց-  
ված, գյուղից 100 մետր հեռավորության  
վրա:

4. Բերքահավաքը, հունձը, տեղափոխու-  
մը և կալուածը սկսվում և միածամանակ,  
չի թուլատրվում աչտեղ հերթականու-  
թյուն մտցնել:

5. Մինչ բերքահավաքը կուտնտ. վարչու-  
թյունը հողբաժնի, ՄՏԿ-ի հետ պարտավոր  
և ստուգել կոլխոզի բոլոր ցանքերը և բեր-  
քատու, լավորակ, միատարր, հիվանդությու-  
նից զերծ ցանքերը առանձնացնել և այլ-  
պիսին հնձել, հավաքել ու կալսել առան-  
ձին՝ աշնանացանի համար, իսկ գարնանա-  
ցանի համար առանձնացնել հատուկ հողա-  
մաս, կազմակերպել սերմանոցներ, նրանց  
վրա սահմանել հատուկ հսկողություն և  
նրանց բերքը հավաքել, կալսել առանձին:

6. Վերանորոգել, կարգավորել բերքահա-  
վաքի գործիքները ու մեքենաները և նրանց  
պակասը լրացնել մինչև հունիսի մեկը:

7. Կարգավորել գյուղամիջյան և դաշտ-  
քի ճանապարհներն ու կամուրջները:

8. Հացահատիկի բերքահավաքը սկսել  
յուրաքանչյուր հասունացած հողակտորի  
վրա: Աւերանկայի բերքահավաքը սկսել՝  
մոմային շրջանում, 4—5 որվա ընթացքում.  
տեղական աշնանացանը մոմային հասունաց-  
ման շրջանում 5—8 որվա ընթացքում. տա-  
րեկանը հնձել մոմային հունացման շրջա-  
նում՝ 6—10 որվա ընթացքում. դարնանա-  
ցան թափվող տեսակները հնձել մոմային  
հասունացման շրջանում սկզբնական շրջա-  
նում 3—6 որվա ընթացքում, իսկ դիմաց-  
կան՝ չթափվող տեսակները 5—10 որվա ըն-  
թացքում:

Գարու բերքահավաքը սկսել մոմային հա-  
սունացման ժամանակ, իսկ հնձելու և հա-  
վաքելու տեխնոլոգիաներ միասին 8—10 որից  
չպետք և անցնի:

## 10. ՊԱՅԻԱՐ ՄՈՒԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

Բերքահավաքից անմիջապես հետո այն  
հողամասերը, վորոնք խիստ վարակված են

խորհուկով և մտախոտերով, բազմախոտիանի  
զութանով կատարել չիրեսավար 8—10 սմ.  
խորությամբ: Այս աշխատանքները պետք  
և կատարել բերքահավաքին զուգընթացա-  
բար: Քանի հողամասը չի չորացել, աշխա-  
տանքները պետք և ավարտել վոչ ուշ քան  
ոգոստոսի 20-ը: Խոզանավար կատարած հո-  
ղամասերում, յերբ մտախոտերը լավ կա-  
նանչեւ են, աշնանը կատարել հիմնական  
վար 18—20 սմ. խորությամբ՝ վորպես  
ցրտահերկ, դարձան ցանքը կատարելու հա-  
մար:

## 11. ԱՇՆԱՆ ՑԱՆՔ

1. Վաղ և ուշ ցելերը ամառվա ընթաց-  
քում պետք և մեկից յերկու անգամ փխրաց-  
նել զիգ-զակ փոցխերով:

2. Նախքան ցանքը պետք և կրկնահերկ  
անել հիմնական վարից սակավ խորությամբ  
(14—16 սմ. խորությամբ):

3. Կատեղորիկ կերպով արգելվում և  
նստած (սնդապած) ցելերի վրա աշնանա-  
ցան կատարել առանց կրկնահերկի:

4. Կրկնահերկը կատարել ջանքից 8—10 որ առաջ, ալլապես հողը չի նստում, և ծլած հացահատիկի թփակալման հանգուցը դուրս և մնում, վորի հետեվանքով ձմեռը ցրտահարվում և:

5. Շարքացանին հատկացված հողամասը կրկնահերկ սնելուց հետո ցանքի նախորդակին մեկից յերկու յերես զիգզակ փոցխով փոցխել վարի հակառակ ուղղությամբ, սպա կատարել շարքացան՝ վարի ուղղությամբ:

6. Ցանքի խորությունը համապատասխանեցնել հողի խոնավության աստիճանին և հողի կազմությանը այս հնչվով՝ խոնավ և ծանր հողամասերում 3—4 սմ: խորությամբ, իսկ թեթեւ և չոր հողերում 4—6 սմ. խորությամբ:

12. ՅԱՆՔ ԿՍՏՍՐԵԼ ԸՍՏ ԳՅՈՒՂԵՐԻ, ՀԵՏ ԵՎՅԱԼ  
 ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ

Դյուզիբրի անունը	Սղիդր	Վեջ
Աթան, Աննիզոր, Լուսուա, Շամուա, Մարց, Քարինջ, Դսեդ, Ս. Բազգի, Մալկաշաա:	1/3—36 թ.	15/9—36 թ.
Ղաշաղան, Մաթեր, Մղարթ, Կ. Աղեզի, Այգեհաա, Արդվի, Քաղունլար, Հազվի, Ամաջ:	5/9—36 թ.	15/9—36 թ.
Աքորի, Կաճաճկուա, Մանահին, Ակնեբ, Հաղբաա, Նեղուց, Բենդիկ, Աղթալաններ:	10/9—36 թ.	25/9—36 թ.
Արճիս, Լճիաձոր, Կողբ, Բարանա, Դովեդ, Թեղուա, Ջուջիվան:	20/9—36 թ.	5/10—36 թ.
Քորբու, Լամբալու, Այրուձեեր, Ճոճկան, Ղալաշա:	5/10—36 թ.	20/10—36 թ.

13. ՊԱՅԲԱՐ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

1. Նախքան վնասատուների յերեվան գալը ցանքի տարածությունները լինելու յին հսկողության տակ, և նրանց հանդես գալու առաջին իսկ որից ձեռնարկվելու չև գործնական պայքար նրանց դեմ:

Գյուղխորհուրդներին կից այժմվանից կազմակերպվում են ցանքի պաշտպանության և վնասատուների դեմ պայքարի շտաբներ, վորոնք գործում են մինչև՛ ամստեսական տարվա վերջը՝ Հողբաժնի և ՄՏԿ-ի գեկավարությամբ:

Հիշված Շտաբի պեսը հանդիսանում և գյուղխորհրդի նախագահը:

Սույն պարտադիր ագրոկանոնները խախտողները չենթարկվում են դատական պատասխանատվության և դրամական տուգանքի մինչև 50 ուրլու չափով կամ 15 որ հարկադիր աշխատանքի, իսկ չարամտքեն խախտողները, բացի դրամական տուգանքից, իրրեվ քրեյական հանցագործներ յենթարկվում են պատասխանատվության



քրիշտական օրենսդրքի համապատասխան  
հոդվածներով:

Պաշտոնական անձիք և գյուղխորհրդի  
նախագահները, վորոնք կխախտեն սույն  
կանոնները, նրանց նկատմամբ՝ բացի կապ-  
մակեկաչական տուժից, ձեռք կառնվեն նաև  
դատական միջոցառումներ:

Սույն կանոնների հսկողութունը գրվում  
և հոդրածնի, ՄՏԿ-ի, միլ. բաժնի և գնուղ-  
խորհրդների վրա:

Սույն պարտադիր վորոշումը ուժի մեջ և  
մինչև 1636 թ. գեկտեմբերի 1-ը:

1207 A  
3616

Ալլանվերդու շրջգործկամի  
նախագահ՝ Հ. ՍԻՎԱՆՅԱՆ

Քարտուղար՝ ՅՆ. ԵՎՈՅԱՆ



[0363]

245

A  $\frac{I}{3612}$

11000

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038208